

Վանաձորի Հ. Թումանյանի անվան լեզուական համալսարանի
ռեկտորի ժ/պ, տեխն. գ. դ. պրոֆ.

Ռ. Սահակյան
18 մայիսի, 2025 թ.

ԿԱՐԾԻՔ

Առաջատար կազմակերպության՝ Հրանուշ Սուրենի Զաքյանի՝
«Կրկնասեռության իմաստային-գործառական դրսևորումները հայերենում»
ատենախոսության մասին՝ ներկայացված բանասիրական գիտությունների դոկտորի
գիտական աստիճանի հայցման համար՝ Ժ.02.01 - «Հայոց լեզու» մասնագիտությամբ:

Կարծիքն ընդունվել է ՎՊՀ-ի հայոց լեզվի և գրականության ամբիոնի նիստում
(08.05.2025 թ., արձ. թիվ 11) բաց քվեարկությամբ: Նիստին մասնակցում էին ամբիոնի
անդամներից 12-ը՝ հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, Բ.գ.թ, դոցենտ Հ.
Բաբոյանը, Բ.գ.թ, դոցենտ Ա. Սանթրոյանը, Բ.գ.թ, դոցենտ Դ. Գյուլգառյանը, Բ.գ.թ,
դոցենտ Ա. Պողոսյանը, Բ.գ.թ, դոցենտ Շ. Ղուկասյանը, Բ.գ.թ, դոցենտ Վ. Փիլոյանը,
Բ.գ.թ, դոցենտ Գ. Հովհիսյանը, Բ.գ.թ, դոցենտ Գ. Պապյանը, Բ.գ.թ, դոցենտ Տ.
Դանիելյանը, Բ.գ.թ, Բ. Ղազարյանը, Բ.գ.թ, դոցենտ Ս. Թումանյանը, Բ.գ.թ., դոցենտ
Հ. Հարությունյանը:

Ելույթ ունեցան ՀԼԳ ամբիոնի վարիչ Հ. Բաբոյանը, Բ.գ.թ, դոցենտ Շ.
Ղուկասյանը: Ելույթ ունեցողները նշեցին, որ ատենախոսությունը նվիրված է հայերենի
կրկնասեռության հիմնախնդրի համակողմանի ուսումնասիրությանը: Աշխատությունը
կարևոր է թե՛ տեսական, թե՛ գործնական առումով, քանի որ կրկնասեռությունը
հայերենի բայական համակարգի հետաքրքրական և կարևոր ոլորտներից է: Հարցի
պատմության, կրկնասեռության հասկացության և դրա տարժամանակյա զարգացման
ուսումնասիրությամբ Հրանուշ Զաքյանն իրականացրել է գիտական արժեքավոր
աշխատանք, որը բարձրացնում է հայերենի բայական համակարգի ուսումնասիրման
որակը: Ատենախոսության մեջ առաջին անգամ համակողմանիորեն և համակարգված
քննության է ենթարկվել կրկնասեռության երևույթը հին, միջին և արդի հայերենի
փուլերում՝ համաժամանակյա և տարժամանակյա հայեցակետերի զուգորդմամբ:
Ատենախոսության հեղինակը մանրամասն վերլուծել է կրկնասեռ բայերի ծագումը,
զարգացման ընթացքը և գործածությունը տարբեր տեքստային շերտերում՝ զրական և

բարբառային նյութի հիման վրա: Արվել են նաև համեմատական դիտարկումներ՝ առնչելով հայերենը հին և նոր լեզուների համապատասխան երևույթներին:

Նկատելի են աշխատանքի կառուցվածքային հստակությունը, տեսական հիմնավորումը, փաստերի հարուստ շտեմարանը: Հեղինակը կարողացել է ցույց տալ, որ կրկնասեռության երևույթը հայերենում ոչ միայն լեզվաբանական, այլև սոցիալ-մշակութային գործընթացների արտացոլում է:

Ատենախոսությունն արժեքավոր աշխատանք է, որում արտացոլվել են հեղինակի թե՛ լեզվաբանական հմտությունները, թե՛ լեզվի պատմական շերտերի դետալային իմացությունը:

Ընդհանուր քննարկման արդյունքում նշվեց, որ ատենախոսության թեման արդիական է՝ հաշվի առնելով հայերենի և ցեղակից լեզուների բայական համակարգերում սեռային տեղաշարժերի և կրկնասեռության զարգացող ուսումնասիրությունների համատեքստը: Հեղինակը դրսևորում է գիտական հետազոտման հմտություն՝ համատեղելով տեսական հիմնավորումը, փաստացի նյութի հավաքագրումը և դրա համեմատական վերլուծությունը: Ատենախոսը համոզիչ հիմնավորում է, թե ինչու է կրկնասեռության երևույթի նոր ուսումնասիրությունը կարևոր հատկապես համեմատական և տարժամանակյա հայեցակետերով:

Օգտագործվել են համեմատական, պատմահամեմատական, համաժամանակյա և տարժամանակյա հետազոտական մեթոդներ: Հատուկ ընդգծման է արժանի ինդրո առարկայի դիտարկումը համեմատական լեզվաբանության համատեքստում՝ օգտագործելով ոչ միայն հայերենի, այլև հունարենի և ռուսերենի տվյալները՝ բացահայտելու իմաստային պատճենման երևույթները, ինչն աշխատանքին տալիս է բարձր գիտական արժեք:

Առաջին անգամ համակարգված կերպով ներկայացված է հայերենի տարբեր փուլերի՝ զրաբարի, միջին հայերենի և արդի հայերենի կրկնասեռ բայերի զարգացումը վիճակագրությամբ: Կրկնասեռությունը ներկայացված է ամբողջական ձևով՝ ձևաիմաստային, ոճական և գործառական առանձնահատկություններով:

Առաջադրված և հիմնավորված են կրկնասեռության երկու տեսակներ՝ սկզբնաձևային և սեռային տեղաշարժերով պայմանավորված:

Բացահայտվել են հայերենի կրկնասեռ բայերի պատմական ժառանգության առանձնահատկությունները և դրանց տարժամանակյա փոփոխությունները:

Հայերենի կրկնասեռությունը ներկայացված է ցեղակից լեզուների համեմատությամբ՝ արձանագրելով հայերենի առանձնահատուկ զարգացումները: Արտացոլված է կրկնասեռ բայերի թվի տարժամանակյա նվազման օրինաչափությունը՝ հիմնավորված վիճակագրական տվյալներով:

Գրաբարի վրա հիմնված պատմական ժառանգության առանձնացումը և դրա շերտային հետազոտումը միջին և արդի հայերենում արժեքավոր ներդրում են:

Հեղինակը կազմել է կրկնասեռ բայերի առաջին համապարփակ բառարանը՝ շուրջ 1000 բայով:

Ատենախոսությունն աչքի է ընկնում նաև իր աղբյուրագիտական լայնությամբ, փաստերի հարուստ բազայով, տեսական հիմնավորվածությամբ. օգտագործված են ոչ միայն բառարանային, այլև բնագրային սկզբնաղբյուրներ՝ գրաբարից մինչև արդի հայերեն:

Սեղմագիրն արտացոլում է ատենախոսության բովանդակությունը:

Առարկություններ և վերապահումներ

Կատարված աշխատանքը բարձր գնահատելով հանդերձ՝ նշվեց հետևյալը:

Աշխատանքն ընդհանուր առմամբ շատ ծավալուն է (477 էջ) և երբեմն ծանրաբեռնված է երկարամետ դրվագներով, ինչը փոքր-ինչ դժվարացնում է ընթերցման հոսքն ու ընկալումը: Որոշ բաժիններում փաստերի չափազանց մանրամասն շարադրանքը (օրինակ՝ քերականների հայացքների համեմատությունը) կարող էր ավելի համառոտ ներկայացվել՝ առանց գիտական արժեքի նվազման: Դրա փոխարեն թեմայի վերաբերյալ շատ արժեքավոր դիտարկումներ ներկայացված են հավելվածների բաժնում: Խոսքը մասնավորապես վերաբերում է գրաբարում բայի կրկնասեռության առաջացման գործում հունարենի ազդեցության արժեքավոր դիտարկմանը:

Հարցի պատմությունը ներկայացնելիս ճիշտ կլիներ անդրադառնալ նաև Գ.Խաչատրյանի «Գրաբարի կրկնասեռ բայերը» հոդվածին (տե՛ս «Լեզու և լեզվաբանություն», 1-2, 34-44-րդ էջեր):

30-րդ և 89-90-րդ էջերում ատենախոսը նշում է, որ սուանդել բայը կրկնասեռ է, քանի որ ունի «մոլեգնել, զայրանալ» չեզոք սեռի իմաստը, և բերում է ՆՀԲ-ի օրինակը «Չարախօսես զեփրեմայ իբրև զսուանդող երնջի ստահակութիւն մոլորե» (Սեբեք. (ըստ ՆՀԲ-ի)): Սակայն այստեղ հարկ է նշել, որ այս իմաստով միայն մեկ օրինակ է բերված.

այլ օրինակներ չի բերում նաև ատենախոսը: Ուստի կարծում ենք՝ այս բայի կրկնաստեղծության մասին պետք է խոսել վերապահումով, քանի որ դասակարգման համար պետք է ավելի շատ փաստագրական հիմնավորում: Ընդ որում՝ ատենախոսը պնդում է, որ ներգործական սեռի իմաստով բայը խոնարհվում է ներգործաձև, իսկ չեզոք սեռի իմաստով՝ կրավորաձև, սակայն, ինչպես տեսնում ենք, բայը գործածված է ենթակայական դերբայով, որը չունի առանձին ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ: Նույնը վերաբերում է նստել բային: Ատենախոսության տարբեր հատվածներում (էջեր 17, 19, 31, 78) հեղինակը ընդգծում է բայի կրկնասեռ լինելը՝ բերելով «Ջերկաթ խիստ յայնչափ թանձրութենէ նստել, տուայտել և ասեղն մի փոքրիկ գործել» (ՆՀԲ, 454) օրինակը՝ իբրև ներգործական սեռի իմաստով գործածության ապացույց: Այս օրինակում, կարծում ենք, նստել բայը բնորոշում է վիճակային անցում՝ «թանձրանալ, նստվածք դառնալ, ամփոփվել» իմաստով, ոչ թե ներգործական իրական գործողություն: Կարծում ենք՝ այստեղ խոսքը է լծորդության համանուն բայի մասին է, որի այլ բայ լինելը փաստում է նաև Ա. Աբրահամյանը (տե՛ս Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Եր., 1976, էջ 134): Նշենք նաև, որ սա նույնպես եզակի օրինակ է:

Աշխատանքի 72-րդ էջում նշվում է, որ ներկայի հիմքից կազմվող ժամանակաձևերում միայն է լծորդության բայերն են ներգործական և կրավորական սեռերի համար տարբեր վերջավորություններ ունենում, սակայն պետք է փաստել, որ ա լծորդության բայերը առաջին ապառնիում նույնպես տարբեր վերջավորություններ ունեն:

75-րդ էջում հիշատակված ցանկամ բայի օրինակներում ներգործական սեռի նշանակությամբ գործածությունը ներգործաձև խոնարհմամբ չէ, ինչպես պնդում է հեղինակը. ընդհանրապես ա լծորդության բայերը ներկա ժամանակաձևում չունեն առանձին ներգործաձև և կրավորաձև, այլ միայն ընդհանուր վերջավորություններ:

92-րդ էջում անհրաւել բայի մասին խոսելիս ներգործական իմաստի դրսևորման համար ատենախոսը նշում է ել, չեզոք սեռի համար՝ իլ ձևերը, սակայն որպես ել ձևի օրինակ բերում է անհրաւեցան տարբերակը, որը ներգործաձև խոնարհում չէ, այլ կրավորաձև:

96-րդ էջում գրում է. *զգալ* կրկնասեռ բայն ունի ներգործական՝ *ոքևէ զգայարանով ընկալել մի բան, ըմբռնել* (Իբրեւ գայն *զգայր* Յուդայ (Բ Մարկ, Թ, 1)), *ճանաչել* (Հարսնն *զգայ* զփեսային բախել զդուռնն (Երզ, Ե, 2)), *իրազեկ լինել, գիտակցել*,

իմանալ, հասկանալ (Իբրեւ զայն *զգացին* զօրք քաղաքին (Բ Մակ., ԺԳ, 12)) և թե չեզոք՝ *զգաստանալ* (Եւ լինիցի հեղեղ՝ *ոչ զգասցլ* յանձնապաստան է (Յոր, Խ, 18)), *լուր առնել* (Օաղկեցին ալիք նորա և նա ոչ *զգաց* (Ովս., Է, 9)): Այստեղ «լուր առնել» իմաստով հիշատակված օրինակն իսկապէս չեզոք սեռի իմաստ է արտահայտում, թե՞ ունի «չիմացավ» ներգործական իմաստը, հատկապէս որ բացակայում է անհրաժեշտ խնդիրը:

Շարադրանքի որոշ հատվածներում առկա են ոչ ճիշտ ձևակերպումներ: Օրինակ՝ «Գ. *Ջահուկյանը* «Հայոց լեզվի զարգացման փուլերը» աշխատության մեջ մեր լեզվի միջին շրջանի համար տարբերում է *միջին հայերեն, կիլիկյան հայերեն, կիլիկյան գրական հայերեն* տերմինները» (էջ 143) նախադասության մեջ աստենախոսը «մեր լեզվի միջին շրջան» արտահայտության փոխարեն հասկանալի պատճառով պետք է գործածեր «գրական հայերենի միջին շրջան» արտահայտությունը:

Գրաբարի *արձակել* բայի մասին խոսելիս (էջ 156) աստենախոսը նշում է, որ այն միջին հայերենում «... ունի ներգործական սեռի *թողնել, թույլ տալ* և չեզոք սեռի *տարածվել* նշանակությունները, որոնք արտահայտվում են հնչյունական տարբերություններ ունեցող *արձկել* ..., *արձկնալ* ..., *արձկենալ* ..., *արձակնալ* ..., *արձականալ* ... բառային տարբերակներով»: Սակայն իրականում դրանցից միայն առաջինն է գրաբարի *արձակել* բայի բառային տարբերակը, մինչդեռ մյուսները (*արձկնալ, արձկենալ, արձակնալ*) ոչ թե գրաբարի *արձակել*, այլ արդեն միջին հայերենի *արձականալ* բայի բառային տարբերակներն են, որը չեզոք սեռի բայ էր, և թեև նշվել է ՆՀԲ-ում, սակայն հիմնավորվել է Մխիթար Հերացուց վկայված բնագրային մեկ օրինակով (ՆՀԲ, 365):

Թքանել բայի մասին խոսելիս (157-րդ էջ) անհրաժեշտ էր անդրադառնալ միջինհայերենյան ոչ միայն *թքնել*, այլև վերջինիս՝ բնագրերում հանդիպող *թքնուլ* բառային տարբերակին: Հմմտ. Նա զայն մասխարա դնէ, Ու *թքնէ* զերդ զխմաճիք – ՀԱՅԲԵՆԵՐ, 503 և Նա զայն մասխարայ դրնէ, Ու *թքնու* զինչ ի խմաճիք ՀԱՅԲԵՆԵՐ, 398: Նա զայն մասխարայ այնէ, Ու *թքնու* զինչ ի խմաճիք ՀԱՅԲԵՆԵՐ, 488:

«*Լքան* յուրախութենէ սիրտք մեր» (Ողբ, Ե, 15) նախադասությունը (էջ 85) ոչ թե կրավորական կառույց է, ինչպես սխալմամբ գտնում է աստենախոսը, այլ չեզոք, քանի որ *լքան* նշանակում է «զրկվել/զաղարել» և ոչ թե «լքվել», իսկ *յուրախութենէ* ոչ թե ներգործող խնդիր է, այլ անջատման խնդիր:

Վ. Առաքելեանի «Գրաբարի քերականութիւն» աշխատությանը որոշ դեպքերում հղում է արվում արևելահայերեն ուղղագրությամբ (էջեր 83, 85, 323):

Խորհրդային շրջանի քերականական աշխատությունների մեջ առաջինը հիշատակվում է Մ.Աբեղյանի՝ 1912թ. լույս տեսած «Աշխարհաբարի շարահյուսություն» գիրքը (էջ 41, էջ 322): Կարծում ենք՝ սա վրիպակ է: Տպագրական և այլ կարգի (անմիօրինակ և սխալ կետադրում, անհարթ ձևակերպումներ, բառագործածության, տեխնիկական սխալներ) վրիպակներ կան նաև հետազոտության այլ մասերում (էջեր 9, 15, 16, 17, 27, 64, 85):

Քրականության ցանկում կան լուրջ վրիպումներ, ժամանակագրական խախտումներ (Թ. Արծրունին և Հովհ. կաթողիկոսը, Լաստիվերցին միջինհայերենյան աղբյուրների ցանկում են նշված): Կան նաև անմիօրինակություններ (Եր, Եր., Երևան), սխալներ (Ամիրդովլաթ, փոխ.՝ Ամիրդովլաթի, արևելոց, Յորթագիւղ), վրիպումներ (էջեր 322, 323, 324, 331, 334):

Որոշ լեզվական իրողությունների մասին խոսվում է առանց հղման, ինչպես՝ «...հնդեվրոպական նախալեզվում բայական նույն բունը միաժամանակ ներգործական, կրավորական, չեզոք սեռի էր ...» (էջ 70):

Կծկեցայ ախտին մեղաց (ՆՀԲ, 1102) օրինակը ոչ թե կրավորական, այլ չեզոք կառույց է, որում *ախտին* բառը միջոցի խնդիր է և ոչ թե ներգործող խնդիր, ինչի մասին վկայում է ՆՀԲ-ի նույն բառահոդվածում տեղ գտած «Կծկեն գնոսա ախտին մեղաց» (ՆՀԲ, 1102) ներգործական կառույցը, հակառակ դեպքում հնարավոր չէ *գնոսա* ուղիղ խնդրի կողքին նույն նախադասության մեջ նաև *ախտին* ներգործող խնդիր (էջ 85):

Ձմայլել բայի մասին խոսելիս ատենախոսը բերում է նաև հետևյալ բնագրային օրինակը (Զի ես արբից գուրախութիւն եւ *զմայլեցայց* 'ի սուրբ Հոգին (ՆՇՄ, 128))՝ մինչդեռ *զմայլեցայց*-ը, *զմայլիլ* չեզոք բայի խոնարհված ձևերից է (կրավորաձև խոնարհում) և ոչ թե *զմայլել* բայի:

Հայերենը իյ երկհնչյուն զրեթե չի ճանաչում: Դա է պատճառը, որ ոռուերենի (օտար լեզուների) ий/ый կապակցությունները հայերենում փոխադրվում են ի-ով՝ առանց վերջնահանգ յ-ի. հմմտ. кий>կի, Андрей Белый>Անդրեյ Բելի, Демьян Бедный>Դեմյան Բեդնի, Нижний Новгород>Նիժնի Նովգորոդ և այլն: Ուստի սխալ է ասել. «Ինչպես նկատում է Ա. Լետուշիյը...» (էջ 310):

Այսպիսով՝ Հրանուշ Սուրենի Զաքյանի ատենախոսությունը թեմատիկ առումով արդիական է, իսկ արդյունքներով՝ նորարարական և գործնական՝ կիրառման

002542-1115